




ԱԿԱԳ՝ Ն՝ ՄԱՌ

ԱԿԱԴ. Ն. ՄԱՌԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«Վէմ»-ի նախորդ համարում խոստացել էինք տալ Ն. Մառի կեանքի եւ գործի առանձին ուսումնասիրութիւնը: Այս անգամ հրաւիրուեալ ենք հանգուցեալ ակադեմականի 1927 թ. գրած ինֆանկեմնագրութիւնը: Յաջորդ անգամ կը տանք պ. Յ. Զաւարեանի «Վէմ»-ի համար պատրաստած ուսումնասիրութիւնը Մառի գիտական աշխատանքների եւ յաբեքական տեսութիւնների մասին: Ինֆանկեմնագրութիւնը առնում ենք Մոսկւայի «Ազանեոկ» շաբաթաբերթից (1927 թ. Յուլիս 3, № 27): ԽՄԲ.

Իմ ծնունդը, եւ մանկութիւնս էլ, համարեա առասպելական են, եթէ նայելու լինենք մօրս պատմածներին: Հայրս մի սկովտիացի ծերունի էր, մայրս՝ երիտասարդ վրացուհի Գուրիայից: Ես ծնել եմ Քուլթայի քաղաքում, Ռիոն գետի աջ ափին, այսպէս կոչւած «Ֆէրմայում», ուր հայրս գիւղատնտեսական դպրոցի վարիչ էր: Այստեղ հայրս տնկել էր մի ահագին պարտէզ՝ ենթահասարակածային բոյսերից: Մազնուլիաները մէջը մի ամբողջ բուրակ էին կազմում:

Մայրս տնային համեստ կրթութեան տէր էր, հայրս՝ համալսարանական, բնապատմագէտ: Հայրս ամենից շատ հետաքրքրւում էր բուսաբանութեամբ: Կարիքի ծանր տարիներին նա Կովկասում սկսեց պարտիզպանութիւն զարգացնել: Եւ առաջինը եղաւ, որ թէյի մշակութեան յաջող փորձեր արաւ Կովկասում, Գուրիայում:

Թէեւ հօրս ազգականների շարքում կային եւ Փրանսացիներ, ռուսներ ու սպանացիներ (ներառաւ ինքն ազգականները), բայց իմ մանկութիւնը ամբողջապէս անցաւ վրացիների մէջ: Շատ կանոնաւոր մենք տեղափոխեցինք Օգուրգետի քաղաքը, վրացի աւատապետների աղքատ յաջորդներից մէկի տունը, եւ այստեղ իմ միտն են գալիս հանդիպումներս վրացի դերասանների, բանաստեղծների, տեղական ու եկտր երեւելի մարդկանց հետը, այլեւ յարաբերութիւններս «գեաղաների» - ձիապանի ու բաղէպաւհի հետ, որ միշտ չըջապատւած էր որսորդական շներով: Նոյն տեղ գտնւում էին եւ թիւրք երեխաներն ու նրանց ծնողները, աւելի ձիւտ՝ մայրերը՝ բռնւած մի քանի վերստ հեռու սահմանադրից: Ես ամբողջ ժամամշակ զնգակ էի խաղում եւ վազվզում էի: Ոչ ոք չէր կարող մրցել ինձ հետ այդ խաղերում: Իսկ տանը, վրացական գիւղից ըս-

սլասուհի մի աղջիկ, քուն բերելու համար ամէն գիշեր կանոնաւոր կերպով վրացերէն նորանոր ու անսպառ հէքեաթներ էր պատմում ինձ, որոնք յիշեցնում էին Շէհէրազադէի հէքեաթները: Կողքիս նստած էր լինում հայրս եւ անգլիերէն թերթ կամ անգլիերէն գիրք էր կարդում: Հետագային հօրիցս մնացած «Մակուլըի ճառերը» գըրքի լուսանցքներէ վրա արւած կծու նկատողութիւններից ես իմացայ, որ հայրս սահպանողական էր, բայց այդ մասին ես փոքր ժամանակ ոչինչ չգիտէի, մանաւանդ որ անգլիերէնն էլ չատ ուչ սովորեցի: Հօրիցս ես ստացայ միայն մէկ բարեմաղթութիւն. «Ո՛ր մի կարգին բան քո ձեռքերից դուրս չի գայ»: - Այդպէս արտայայտւեց նա իմ շինած խաղալիքներիս հետ արած խաղերս տեսնելուց յետոյ: Իսկ մայրս, ընդհակառակը, չափազանցւած յոյսեր էր կապում որդու հետ: Նա իմ մէջ տեսնում էր այն ամենը, որ ինքը լաւ, նոյն իսկ կատարեալ բան էր համարում: Այսպէս, օրինակ, նրան ըստ երեւոյթին աւելի դիւր էր գալիս չէկ մարդիկ, այդ պատճառով նա ամենքին հաւատացնում էր, թէ ես ամառայ արեւից եմ այդպէս սեւացել, իսկ իրապէս սպիտակ եմ եւ նոյն փսկ չազանակաւ գոյն մագեր ունեմ (եւ ինձ միշտ յիշում եմ թուխ, նոյն իսկ սեւ):

Մայրս ու հայրս ընդհանուր լեզու չունէին: Հայրս, բացի մայրենի՝ անգլիերէն լեզուից, ազատ խօսում էր եւ ֆրանսերէն: մայրս գիտէր միայն վրացերէն: Նրանց յարաբերութեան ձեւը՝ ուսներէն ու վրացերէն ազաւաղւած բառերի խառնուրդը որոշ աղղեցութիւն է արել եւ իմ բառամթերքի վրա, բայց, ընդհանուր առմամբ, ես կարող եմ իմ մայրենի լեզուն համարել վրացերէնը, կամ, աւելի ճիշտը, գուրիական բարբառը: Իմ առաջին քերականութիւնը վրացականն էր: Ապա սկսեցի հօրս հետ պարապել ֆրանսերէն՝ օգտուելով վրացերէն տառերով գրւած ֆրանսերէն բառերից:

Իմ առաջին դպրոցական պարապմունքները գաւառական ուսումնարանում լիքն էին չարութիւններով եւ մանաւանդ ծիծաղի անգուսպ պոռթկումներով, որոնք վարակում էին ամբողջ դասարանը եւ որոնց համար կանոնաւոր կերպով, չաբաթը մի քանի անգամ, առանց ճաշի էի թողնւում: Պատիժը կատարւում էր հետեւեալ ձեւով. իմ ձեռքից առնում էին դլխարկս եւ թողնում՝ ազատ դպրոցում: Այդ, ի հարկէ, չէր արգելում, որ ես գլխարաց գնամ տուն, ճաշեմ ու յետոյ, առանց նկատուելու, վերադառնամ դպրոց ու սպասեմ, որ յետ տան գլխարկս:

Ութը տարեկան հասակումս կորցրի հօրս: Նրան թաղեցին մեծ շքով: Ես ու մայրս մնացինք փաստօրէն առանց որեւէ ապաստանի: Ամենքը ինձ համարում էին գատապարտւած տգիտութեան, թե-

րուս, որ անկարող է նոյն իսկ իր հօր գրքերը կարդալու: Ի դէպ՝ վերջինների ճակատագիրը եղաւ շատ դառն. հօրս գրադարանը դարսւլած էր մեր տան տանիքի տակը, գրքերը օգտագործւեցին մասամբ իրրեւ վառարանի վառելիք, մասամբ էլ պատերը պատառելու համար: Մեր ազգականները շուտով քշեցին մեզ տնից: Հօրս մատուցած գիւղատնտեսական ծառայութիւնների փոխարէն մօրս յաջողեց տեղաւորել ինձ դասական գիմնաղիայում: Գիմնաղիա ընդունւեցի հակառակ պատրաստւած չլինելուս, մանաւանդ կրօնագիտութիւնից: Այս խնդրում ինձ վրկեց տեսչի յայտարարութիւնը, թէ ես անգլիացի եմ: Իմ առաջին գրաւոր աշխատանքը ռուսերէն լեզւից ցնցող տպաւորութիւն գործեց. մէջը այնքան սխալ կար, որքան վանկ, եթէ ոչ տառ: Բայց ռուսերէն լեզւի դասատու Բլազո-դարովը, չգիտեմ ինչու, ուշադրութիւն դարձրեց վրաս՝ անգրագէտ տղի մէջ տեսնելով ընդունակ մի աշակերտ: Իմ համբաւը տարածւեց ուրիշ կողմից, որտեղ սովորաբար մանուկների կոտորած էր տեղի ունենում - լատիներէնից: Գրեթէ բացառապէս վրացիներից բաղկացած դասարանում այդ անծանօթ ու մեռած լեզուն ոչ պակաս անծանօթ ռուսերէնի օգնութեամբ սովորելով՝ ոչ ոք ոչինչ չէր հասկանում: Իսկ ես, ինձ համար էլ բոլորովին անսպասելի կերպով, լաւագոյն լատինագէտը դուրս եկայ: Ես գրում էի յետամնաց ընկերներիս գրաւոր աշխատանքները եւ կատարում էի նրանց լատիներէն վարժութիւնները: Երբ հրաժարւում էի կամ անյաջող էի կատարում, սաստիկ ծեծւում էի, իսկ մի անգամ նոյն իսկ դանակի հարւած ստացայ ազդրիցս: Ժամանակ առ ժամանակ ուսուցիչները բռնում էին իմ այդ աշխատանքները եւ իրրեւ պատիժ փակում էին մի մութ նկուղում, որ գտնւում էր ծանօթ հաստատութեան կողքին, որի հոտը մինչեւ այսօր էլ դեռ յիշում եմ:

Վրացերէն առաջին կարգացած գիրքս հէքեաթների մի ժողովածու էր, իսկ ռուսերէն (արդէն գիմնաղիայում, երկրորդ դասարանում)՝ «Ռոբինզոն Կրուզօն»: Գրքերը նոր աշխարհ բացին իմ առջեւ: Այդ ժամանակները մայրս, որ ջահել ու գեղեցիկ կին էր, ամուսնացաւ մի մինգրելի հետ: Նա շարունակում էր իր կարողութեան չափով հետեւել ինձ, բայց եւ այնպէս գիչերօթիկ դպրոցն ու գրքերն էին այն աշխարհը, ուր ապրում էի ես գլխաւորապէս: Իմ անգլուսալ բնաւորութիւնը շատ անախորժութիւն էր պատճառում դէպի ինձ լաւ տրամադրւած ուսուցիչներին: Իմ ամէն մի չարութեան համար ինձ կարող էին դուրս չպրտել դպրոցից ձեռքս տալով մի վարկաբեկիչ վկայական, բայց ամէն բան ներւում էր, որովհետեւ, ի բաց առեալ ուրիշ բաները, ինձ դնահատում էին իրրեւ լաւ ձայն

ունեցող երգչի եւ գլխաւոր ինչպէս նաեւ ինչպէս (եւ սրինգ էլ նաեւ) : Պէտք է ասել, որ երգի ու նաեւ լիւրճերի ժամանակ էլ բանը չէր անցնում առանց հերթական եւ արտակարգ խայտառակութիւնների, որոնք անդրադառնում էին իմ վարքի թանշանների վրա :

Եւ շարունակում էի գրաւել վաղըով, բայց այդ բանը բարիք չբերեց ինձ : Մի անգամ ծանրապէս խախտեցի մի ոտս : Հիւանդութիւնս բարդացաւ եւ մասնագէտ բժիշկների խորհրդակցութեան հեղինակաւոր վճռով՝ ուղում էին կտրել ոտս : Միայն մօրս պնդումի վրա, որ թոյլ չտւեց կտրելու ոտս, եւ հաշմանդամ չդարձայ, եւ բոլորովին բժշկւեցի սնըխչիի օգնութեամբ : Բայց եւ այնպէս գրեթէ կէս տարի դասերից յետ մնացի : Մայրս ոչ նիւթական միջոց ունէր եւ ոչ բնակարան : Իմ բացակայութեան ժամանակ գլխաւորում մտցրին յունարէն լեզւի դասեր, եւ ես արդէն պատրաստուում էի թողնել դպրոցը եւ դառնալ հեռագրական պաշտօնեայ՝ մօրս եւ իմ գոյութիւնը ապահովելու համար : Բայց մայրս չհամաձայնեց : Յունարէն գիտութիւնը, որ ես բաց էի թողել, պէտք եղաւ լրացնել ձմեռայ արձակուրդի տօներին, վրացական անյատակ ու անառաստաղ մի խրճիթում, ցրտին, ողորմելի խարոյկի աղօտ լոյսով : Բայց եւ այնպէս, ինձ յաջողեց վերսկսել պարապմունքներս եւ դպրոց վերադառնալով՝ ես մեծ չփութ էի պատճառում հին լեզուների դասատուներին՝ բարձրաձայն կանխելով նրանց տալիք բացատրութիւնները : Դրա համար ես ձեռք էի բերել գերմաներէն դասագրքեր, որոնցով պատրաստուում էին ուսուցիչները : Գլխաւորապէս սովորում էին Ֆրանսերէն, իտալերէն, գերմաներէն, անգլիերէն, յունարէն եւ լատիներէն լեզուները, եւ ես օգտւելով յաջող աշակերտի համբաւից՝ փոխադրում էի դասարանից դասարան՝ աւելի զբաղւելով ընթերցանութեամբ, քան դասերի պատրաստութեամբ : Իմ անհետեւ պատասխանները, իբրեւ հետեւանք պատրաստուած չլինելու կամ չհասկանալու, սովորաբար բացատրում էին քմահաճօքով իմ կողմից : Եւ յաւիտականում էի վրացերէն գրական գործունէութեամբ, գրում էի ոտանաւորներ եւ դպրոցական թերթ էի հրատարակում, որ օգնում էր ինձ տիրելու վրացերէն լեզւի արւեստին, մի լեզու, որ հետագային դարձաւ իմ մասնագիտութեան առարկան : Այսպէս, օրինակ, ի թիւս այլ լրագրական յօդածների, եւ գրել եմ Բաթում քաղաքի անւան մեկնութիւնը. համարձակ կերպով ուսումնասիրում էի նախապատմական տեղագիտութեան վերաբերող մի հարց, որ միայն վերջին տարիները դարձաւ իմ մասնագիտութիւնը : Միաժամանակ ի պատասխան վրաց նշանաւոր բանաստեղծ Ալիակի Ծերերթելիի, որ 1881 թ. մարտ 1-ի դէպքի (Ալեքսանդր Բ.-ի

սպանութեան) առթիւ գրել էր «Հիւսիսից եկող թռչնակի ուրախ երգը», թերթում զետեղեցի «Հրաւէր» անունով մի ոտանաւոր, որով հրաւիրում էի գործի, փոխանակ ճուղղելու:

Դասական հեղինակների ընթերցանութիւնը Փրանսերէն ու գերմաներէն լեզուներով տեղի տւեց վիպապաշտ գրականութեան, այլ եւ Զուլայի վէպերի («Ռուզոնների ընտանիքը») ընթերցանութեան: Իմ վրա շատ մեծ տպաւորութիւն թողեց Շէրի այն ժամանակները հռչակած «Տիեզերական Պատմութեան Կոմեդիա» գրքի ընթերցանութիւնը գերմաներէն բնագրում: Յիշեմ եւ երկու փախուստս գիմնադրայից: Առաջին անգամ փախայ Թիֆլիս, բուսաբանական այգին, բուսաբանութիւն սովորելու նպատակով: Բայց ապրուստի միջոցներից զուրկ՝ ստիպւած եղայ աշխատելու զրադարանում: Գիմնադրայի վարչութիւնը ուղարկեց ինձ մի յանձնարարական նամակ ուղղւած իշխանութիւններին ու հիմնարկութիւններին, որով յայտնում էր թէ ես ուղարկւած եմ սլարապելու համար եւ խնդրում էր աջակցութիւն ցոյց տալ: Միւս անգամ փախայ գիմնադրայից, որովհետեւ չէի ուզում աւարտական քննութիւն տալ, հակառակ որ կարող էի ոսկի մէդալ ստանալ: Ես այնքան զրաւել էի յունարէն լեզուով, որ ուզում էի տիրել նրան նախքան համալսարան մտնելս, ուր մըտադիր էի ընտրել բժշկական բաժինը: Իմ այդ վճռին նախորդեց ընթերցումը Շլէյդէնի «Ծովը» գրքի, ուր շատ կտորներ էին բերւած յոյն հեղինակներից, եւ ես որոշեցի այնպէս կատարելագործւել, որ ազատ տիրեմ յունարէն լեզւին: Եւ այն պահուն, երբ դասական լեզուները գիմնադրաներում հաստատուում էին բռնի կերպով, իմ ցանկութիւնս մի տարի եւս մնալու գիմնադրայում յունարէնս կատարելագործելու նպատակով, համարւեց իրրեւ հոգեկան հիւանդութեան նշան, եւ ինձ արտաքսեցին գիմնադրայից:

Վճռական դարձը բնական գիտութիւններից ու բժշկութիւնից դէպի բանասիրութիւնը եւ, ի մասնաւորի, դէպի Կովկասագիտութիւնը, տեղի ունեցաւ, անկասկած պատմութեան ուսուցիչ եւ Կովկասի ազգագրութեամբ զբաղող Ստոյեանովի եւ Փրանսերէն լեզւի ուսուցիչ Նարբուդի ազդեցութեամբ: Վերջինս ցոյց տւեց ինձ ուսմանական լեզուների ուսումնասիրութեան մանրամասնութիւնները եւ այս նոր լեզուների յարաբերութիւնը դէպի լատիներէնը:

Նորից ընդունւելով գիմնադրա՝ ես յաջողութեամբ աւարտեցի եւ որոշեցի, հակառակ բոլոր խորհուրդների, մտնել համալսարանի արեւելեան լեզուների բաժինը: Ուսուցիչներս եւ ընկերներից ոմանք յորդորում էին յետ կենալ. «մի թաղիր տաղանդդ, մի՛ փչացրու քեզ. ի՞նչ է ստացւելու քեզանից լաւագոյն սլարադային. վրացերէն

լեզուի մի ուսուցիչ՝ չ, այսինքն՝ պարզապէս դիւզական մի ուսուցիչ» : Այդ ժամանակից ի վեր եւ վարժեւել եմ լսել ինձ խորհուրդ տուողներին (որոնց թիւը չափ չափ է), բայց վարեւել բոլորովին հակառակ կերպով : Դեռ այն ժամանակ եւ նպատակ դրի պարզաբանել վրաց լեզուի ծագումը, դեռ այն ժամանակ վրացերէնը համեմատում էի (կենդանի մարդկանց հետ ունեցած հաղորդակցութեանց հիման վրա) ինձ ծանօթ միակ հարեւան արեւելեան լեզու՝ թիւրքերէնի հետ : Այդ դադափարը, որ հետագային ժամանակաւորապէս դուրս ընկաւ, իրօք մէկն է դիտական - հանրային ամենակենդանի խնդիրներից, որ այժմ առաջ է քաշում յարեթական տեսութիւնը : Ասենք՝ մեզ համար դա արդէն խնդիր չէ, այլ իր հիմքում անվիճելի մի դրուժիւն, որ պահանջում է մանրամասն մշակութիւն թիւրքական նիւթերի հիման վրա :

Համալսարանում եւ զբաղւած էի երեք բաժանմունքներում . Կովկասեան, ուր այն ժամանակ կային միայն հայերէն եւ վրացերէն լեզուները, արաբ - պարսիկ - թիւրքական եւ սեմական, ուր կային եբրայական, արաբական եւ սիւրիական լեզուները . վերջինս ամփոփւած էր այսպէս կոչւած քաղզէական բարբառների խմբի մէջ : Արաբերէն պարապմունքիս երկրորդ տարին, 1886 թ., ինձ խիստ զարմացրեց վրաց լեզուի ազդակցութիւնը սեմական լեզուների հետ : Իմ այս դիտողութիւնը նկատեց աւելի քան կասկածելի : Յայտնի արեւելագէտ Ռոզէնը (արաբագէտ) ինչ կատարեալ պարտութիւն էր գուշակում՝ ասելով թէ եթէ այդ կարծիքը լինէր ճիշտ, կարիք չէր լինի սպասելու որ մէկը Կովկասից դայ եւ այդ դիտող անէ, այլ վաղուց յայտնի կը լինէր : Իմ առաջադրած այս խնդիրը աւելի լաւ ընդունելութիւն չգտաւ եւ ընկերներիս կողմից : Նա ստիպւած եղայ խորանալ սեմական լեզուների ուսումնասիրութեան եւ այդ բնագաւառին վերաբերող լեզագիտական գրականութեան մէջ : Կովկասեան ուսանողութեան ազգային շրջաններից ինձ աջակցեցին ամենից առաջ վրացիները, որոնք դեռ գիմնադրիայից հաւատով էին վերաբերում ինձ : Հետագային, երբ եւ մի կարեւոր չափով պատահական կերպով զբաղւեցի Անիի աւերակների պեղումներով, համալսարանի ընկերներից հայերն էլ սկսեցին աջակցել ինձ : Վրացիների հետ ինձ միացնում էր եւ հասարակական դադափարը : Ազգային շարժման ուղիների վրա երազում էինք Վրաստանի ազատութեան մասին : Յիշում եմ թէ ինչպէս ուսանողութեան շրջանում իմ գիմնադրական ընկերներից մէկի հետ ուխտում էինք «գէնքը վար չդնել», մինչեւ որ չազատենք Վրաստանը : Հետագային նա դարձաւ բանկի կառավարիչ, իսկ ես՝ ակադեմական :

1888 թ. լոյս տեսաւ իմ «Վրացերէնի ազգակցութիւնը սեմական լեզուների հետ» աշխատութեան առաջին ձեւակերպութիւնը, որ կատարւեց առանձնութեան, իր տեսակի գիտական ընդլայտակեայ դադտնապահութեան մէջ եւ հրատարակւեց թերթերում, վրացերէն լեզուով «Խնութիւնը եւ վրացերէն լեզւի յատկութիւնները» վերնագրով: Այդ ժամանակից ի վեր, ակադեմական կեանքը շրջապատող պայմանները թոյլ չտւին ինձ բացայայտօրէն դրադելու այդ խնդրի մշակութեամբ, մինչեւ դոկտորական շարադրութեան պաշտպանութիւնս 1903 թ.: Միայն 1908 թ. հրապարակ հանւեց այսպէս կոչւած յարեթական տեսութեան ամփոփումը, «Նախնական հաղորդագրութիւն վրացերէնի եւ սեմական լեզուների ազգակցութեան մասին» յօդւածում, որ մի ներածութիւն է «Հին-վրացական լեզւի քերականութեան հիմնական աղիւսակները»-ի եւ այդ լեզւի բայերի կազմութեան հիմքերի վերծանութեան առաջին փորձն է: Աշխատութիւնը ձօնւած է իմ ղեկավար, սեմագիտութեան պրոֆէսոր Ռոզէնի յիշատակին: Ես նրան եմ պարտական գլխաւորապէս իմ գիտական դպրոցի համար եւ նրա շնորհիւ պահւեցի համալսարանի գիտական միջավայրում: Նա վախճանւեց երկուերեք տարի անցած այն օրից, երբ ինձ յաջողւեց կարգաւ նրան «Վրացերէնի ազգակցութիւնը սեմական լեզուների հետ» աշխատութեանս արդէն տպւած յառաջաբանը: Նա մէկից աւելի անգամներ ընդհատում էր ընթերցանութիւնս բացազանչելով - «Այո՛, դուք ամէն ինչ մտածել ու մշակել էք, այո՛, դուք յստակ կերպով ասպացուցել էք»: Այն ինչ նա էր, որ պարտութիւն էր դուշակում ինձ:

Դեռ ուսանողական նստարանի վրա ես դարձայ իմ վրացերէն լեզւի պրոֆէսորի դառնութիւնների ակամայ պատճառը: Նա չէր կարողանում մարսել ոչ իմ լեզւաբանական, ոչ էլ գրական-պատմական եզրակացութիւնները եւ սկսեց վարկաբեկել իմ աւարտական շարադրութիւնը: Նա կարծում էր, թէ ես ուզում եմ գրաւել իր ամբիոնը, թէեւ ես բնաւ ամբիոնի աչք չունէի եւ երազում էի վերադառնալ հայրենիք աշխատելու: Բայց Կովկասեան Ուսումնական Վարչութեան հակադպիք քաղաքականութիւնը, ըստ որի հայերէն կամ վրացերէն լեզուների ուսումը դիտւում էր որպէս ազգային սընսպարծութեան մի նշան, եւ ամէն կերպ դադափարական հակամարտութիւն էր սերմանում Կովկասի Ժողովուրդների մէջ, նոյնպէս աշխատանքի բնականոն պայմաններ չէր ստեղծում: 1889 թ. Կովկասեան Ուսումնական Վարչութիւնն ինձ առաջարկեց մի ուսումնասիրական ուղեւորութիւն կատարել դէպի Սիւնիա, բայց վրացական շրջանում ես տեսայ, որ իմ դէմ դժգոհութիւն կայ այն բանի հա-

մար, որ ես պնդում էի, թէ վրաց գրականութիւնը կապւած է պարսկականի հետ եւ որ վրացի հանճարեղ բանաստեղծ Շոտա Բուստաւելու երկի նիւթը պարսկական ծագում ունի: Այդ դժգոհութիւնը վերածւեց զայրոյթի բուռն փոթորիկի, երբ ես սկսեցի պարզել վրաց գալութեան անդրանիկ յուշարձանի՝ Աստուածաշունչի հայերէնից թարգմանւած լինելու փաստը: Ես ստիպւած եղայ վերադառնալ Պետերբուրգ եւ համաձայնել ընդունելու հայագիտութեան պրոֆէսոր Պատկանեանի արած առաջարկը - պատրաստել հայ բանասիրութեան, լեզւի ու գրականութեան պրոֆէսորութեան համար:

Վերջնականապէս հայերէնի մասնագիտութեամբ զբաղւելու վրէժիւր ես պարտական եմ երրայազէտ Դ. Ա. Խլոյսոնին: Ես գրաւեցի հայերէն լեզւի ամբիոնը, հակառակ, որ այդ ամբիոնի համար պատասխանատու պրոֆէսորը*) մերժեց մասնակցել իմ մագիստրոսական քննութեան եւ հակառակ հայերի պատւիրակութեան խնդրանքի՝ հայագիտութեան ամբիոնը չյանձնել ոչ-հայի:

Ժամանակն է այստեղ ընդհատել կենսագրական փաստերի հաղորդագրութիւնը, որովհետեւ նրանք կապւած են այժմ դեռ գործող անձերի եւ հիմնարկութիւնների հետ: Պէտք է մատնանշել միայն զանազան լեզուների վերաբերող նիւթերի հաւաքման համար կատարւած մի շարք գիտական արշաւանքներս՝ նկատելով միաժամանակ, որ բոլորովին անպէտք առասպել է ինձ եղած վերադրումը, թէ ես խորապէս ծանօթ եմ Կովկասեան բոլոր լեզուներին: Իսկ միւս կողմից, առասպել չէ, այլ ճշմարիտ իրականութիւն, որ իմ բոլոր ստեղծագործական լեզւաբանական դադափարները առանձնասենեակի աշխատանքի արդիւնք չեն, այլ ծագել ու ձեւակերպւել են մարդկանց եւ ընութեան հետ ունեցած չփոմնեցիւն ընթացքին, փողոցներում, շուկաներում, անապատներում եւ ծովերի վրա, լեռներում եւ դաշտերում, գետերի եւ աղբիւրների մօտ, ձիու վրա ու վազոնում, բայց բնաւ երբեք առանձնասենեակում:

Խնդիրների թիւը շատ շատ էր, մէկը յաջորդում էր միւսին. ուսումնասիրել Կովկասը, նրա մշակութային պատմութիւնը, լեզուն, գրականութիւնը եւ նիւթական մշակոյթի յուշարձանները: Սկսելով վրացերէն եւ հայերէն լեզուներից՝ առաջադրւած խնդրի ուսումնասիրող առարկաների շրջանակը աստիճանաբար ընդլայնւում էր մի շարք ոչ-կովկասեան լեզուներով, որոնցից մէկը կապւած էր վրացերէնի, միւսը՝ հայերէնի հետ: Մէկ խնդիր սակայն,

*) Պրոֆ. Պատկանեանը արդէմ մեռած էր: Հայագիտութեան ամբիոնը գտնւում էր վրացի պրոֆ. Յագարելի տեսչութեան տակ: ԽՍԲ.

որ կարմիր գծով անցնում է իմ բոլոր աշխատութիւնների միջից եւ մնում է մինչեւ այժմ, լեզւի խնդիրն է, որ սկզբնապէս ուսումնասիրւում էր հայ եւ վրացական դրական հետաքրքրութիւնների սահմանում, իսկ յետոյ՝ նաեւ լեզւագիտական: Պատմա-գրական հետաքրքրութիւնները փոխարինեցին հնագիտական հետաքրքրութիւններով, որոնք իրենց համար նիւթ դտան հայկական միջնադարեան քաղաք Անիի պեղումների մէջ: Անին բացառիկ նշանակութիւն ունի Կովկասի բոլոր ժողովուրդների ուսումնասիրութեան համար, թէեւ նախապէս բերդն ու բնակչութիւնը աշխտեղ զուտ հայկական էին: Անիում ստեղծեց յատուկ մի աշխատանոց ուսումնասիրելու համար Կովկասի հնութիւնները: Սակայն, քայլ քայլի վրա Կովկասեան լեզուների ծագման հարցը աճեց ու վերածեց մարդու հնչական խօսքի ծագման խնդրին:

Առաջադրած խնդրի լուծման համար մասնաւորապէս նպաստաւոր էր այն փաստը, որ Արեւելքի բոլոր հիմնական լեզուները ամփոփւած էին համալսարանի մէկ բաժանմունքում: Բացի վերեւ յիշւած լեզուներից, ես զբաղւում էի եւ սանսկրիտով, հին պարսկերենով եւ փէհլեւի լեզւով: Աշխարհի հիմնական, ինքնուրոյն մշակոյթի տէր լեզուներից, երբ տեսութիւնը պարզեց նաեւ նրանց գիտութեան անհրաժեշտութիւնը, ինձ պէտք եղաւ լեզւագիտական տեղեկութիւններս լրացնել միայն հեռաւոր Արեւելքի լեզուներով:

Յարեթական տեսութիւնը, որ այժմ իր մէջ ամփոփում է աշխարհի բոլոր լեզուները, լանդեց լեզւագիտութեան եւ նիւթական մշակոյթի հասարակական շարժումների պատմութեան կապակցութեան հարցին, եւ այն եղբակացութեան, որ ինչպէս Արեւելքի ու Արեւմուտքի բոլոր մշակոյթները, այնպէս եւ լեզուները միեւնոյն տեղծագործական երեւոյթի արդիւնքն են: Մի կողմ են ընկել ոչ միայն կրօնական, այլեւ ազգային բաժանումները, իբրեւ լեզուների կազմութեան ստեղծագործական աղղակներ: Յեղային ծագումի տեսակէտից տարբեր համարւող լեզուներ դուրս եկան միայն տարբեր դարաշրջանների ստեղծագործութիւն: Լեզուների ամէն մի ցեղային ընտանիք դուրս եկաւ ոչ թէ ծագումով տարբեր լեզւական մի խումբ, այլ նախորդ դրութեան զարգացումը հանդիսացող նոր դրութիւն: Անհետացել է ոչ միայն վրացերէնի, այլ նոյն իսկ չինական լեզւի առանձնացումը: Եւ վերջին ժամանակներս մենք ախանաւոր ենք հաստատմանը մի փաստի, որ Ճափոնիայից ու Չինաստանից սկսած մինչեւ Ատլանտեան ուղիւնոս մշակութային ու նախապատմական կեանքի հիմնական բառերը միեւնոյնն են: Բոլոր լեզուների բոլոր բառերը յանգում են չորս տարրի:

Պատերազմի եւ Կովկասի հետ յարաբերութիւնների խզման հետեւանքով, ես ժամանակաւորապէս ընդհատեցի Կովկասեան լեզուների աշխատանքներս եւ ձեռնարկեցի արեւմտեան Միջերկրականի եւ մասնաւորապէս Եւրոպայի նախապատմական լեզուների միակ մընացորդ՝ բասկեան լեզւի ծագման հարցի ուսումնասիրութեան: Հընարաւորութիւն ստանալով ուղեւորել Արեւմուտք, բասկերէնի հետազոտութեան ժամանակ, ես հաստատեցի ազգակցութեան մի շարք նշաններ բասկերի լեզւի եւ մեռած էտրուսկեան, Կովկասեան յարեթական լեզուների միջեւ, բայց եւ հրաժարեցի այն մտքից, թէ յարեթական լեզուների ծագումը կապւած է միայն բասկերէնի հետ, ինչպէս եւ Կովկասը այդ հնագոյն լեզուների նախահայրենիքը համարելու տեսակէտից:

Ինձ համար աննկատելի կերպով, ընդհանրապէս լեզւի, այսինքն՝ մարդկային խօսքի ծագման խնդրի լուսաբանութեան ընթացքում, ես շուտով ձեռք բերի այնպիսի տեսալներ, որոնք հարկադրեցին հետազոտական աշխատանքների կենտրոնը մեռած լեզուներից փոխադրել դէպի կենդանի լեզուները եւ լեզական երեւոյթների տարեթւերն ու յաջորդականութիւնը որոշել ըստ մի տեսակ երկրաբանական հնութիւն ունեցող խաւերի: Սա հետազոտութեան հնախօսական եղանակ է: Նա ստուգւում է այն բանով, որ աշխատանքի ընթացքում երեւան եկած բացերը լրացւում են Կովկասի նոր, դեռեւս չուսումնասիրւած լեզուների հետազոտութեամբ եւ կամ հայերէնի ու վրացերէնի հարեւան կամ ցեղակից լեզուների միջոցով: Նոյն այդ գրութիւնները հաստատւում են եւ այն լեզուներով, որ իմ տեսութեան ստեղծման ժամանակ ես դեռ չգիտէի եւ մտադիր էլ չէի ուսումնասիրել:

Երբ յայտնի դարձաւ մարդկային խօսքի զարգացման ընթացքը, որ պատմութիւնն է շարժման բնագոյծի անկատար լեզուներից դէպի թւով նւազ, կատարեալ լեզուները, եւ երբ ընդնշմարեցին անցեալ ճանապարհների հանդրաւանները, ապագայ անխուսափելի միաձուլումը առաջադրեց մի նոր խնդիր եւ երեւան հանեց լեզագիտութեան նշանակութիւնը: Այժմ լեզագիտութիւնը պէտք է զբաղւի ոչ միայն լեզւի անցեալով, այլ եւ նրա ապագայով եւ նպատակ պէտք է դնէ՝ գիտակցել ու ղեկավարել մարդկային խօսքի զարգացման գործողութեամբ, մի գործողութիւն, որ տեղի է ունենում շատ դարեր եւ առաջնորդում է մարդկային խօսքի միութեան:

